

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱԻՐԵԱՆ

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱ.

X

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԸ

Հայ աշուղները, որ մեծամասնութիւն էին կաղմուժ Անդրկովկասում, համարեա ամենքն էլ արհեստաւոր դասից էին դուրս գալիս: Շատերը նրանցից նոյն իսկ իրենց ծածկանունն ի մէջ պահել են նախնական զբաղումի հետքերը: Այսպէս՝ Շամչի Մելքօ՝ մոմադործ էր, Բաղադօղլի՝ կերպասեղէնի վաճառականի որդի, Դալաք Մուրադա՝ սափրիչ եւ այլն: Սայեաթ Նովան էլ աշուղ դառնալուց առաջ եղել է արհեստաւոր, եւ յետոյ էլ, ըստ երեւոյթի՛ն, պահել է սկզբնական արհեստը, յամենայն դէպս մինչեւ աշուղների շարքում աչքի ընկնող դիրք գրաւելը եւ պալատական աշուղ դառնալը նա զբաղում էր արհեստով: Ն. Աղբալեանը կարծում է նոյն իսկ*), որ մինչեւ աշուղական գործունէութեան վերջն էլ չի թողել իր հիմնական արհեստը:

Գ. Ախվերդեանը հին թիֆլիսցիներից հաւաքած տեղեկութիւններով այսպէս է բնորոշում Սայեաթ Նովայի զբաղումը (էջ զ—է). «Պատիկ Արութիւնին տալիս են աչկերտ մէկ ջուլհակի մօտ. խիստ աչքբաց ըլելով՝ կարճ ժամանակում էնքան վարպետանում է Արութիւնն, որ ինքն իր համար մէ մեքենայ է հնարում, որով կտաւը երկայն փողոցի մէջ հինելու տեղ, հինում ու գործում է էլել իր սենեակումն»:

Որ Սայեաթ Նովան եղել է ջուլհակ, այդ ընդունում են համարեա բոլոր ուսումնասիրողները. երբեմն միայն ենթադրութիւն է յայտնում, հայերէն № 32,2 երգի վրա հիմնած, թէ Սայեաթ Նովան եղել է ատաղձագործ: Այսպէս, Մթացմիկեւլին (Ճիճինաճէ), Ախվերդեանի գրքի մասին աննպաստ կարծիք յայտնելուց յետոյ, ասում է. «Սայեաթ Նովան թիֆլիսցի սրայտագործի որդի էր, Դարիա թագուհու վանքում կարգաւ-գրել սովորեց եւ միեւնոյն ժամանակ

*) «Գործ» ամսագիր, Բագու, 1917. № 4—5, էջ 99—105:

աշկերտ էր ատաղձագործի մօտ : Այդ ժամանակ նրա մէջ երեւան եկաւ ոտանաւոր յօրինելու ընդունակութիւն եւ գեղեցիկ ձայն : Յետոյ նա թողեց վանքը եւ գնաց կաթոլիկ միսիոնարների մօտ (Փրանգեբի պատրիքի) բժշկական արւեստ ուսանելու համար : Միեւնոյն ժամանակ սովորեց եւ սաղ նւագել : Սաղանդարութեամբ եւ բժշկական արւեստով վաստակեց հասարակ ժողովրդի համակրանքը : Եւ նոյն ժամանակ էլ սկսեց երգեր յօրինել»*) :

Որտեղից է առել այս տեղեկութիւնները—ոչ մի աղբիւր Մթացմիւնդելին ցոյց չի տալիս, մինչդեռ նրա ասածները սկզբից մինչեւ վերջ հակասում են մեր գիտցածին : Այսպէս, յայտնի է, որ Սայեաթ Նովայի հայրը պայտազործ չէր, որ Դարիա թագուհու վանքը հիմնել է աւելի ուշ : որ Սայեաթ Նովայի ոտանաւորներէից ոչ մէկի մէջ աղնարկ չկայ, թէ նա ծանօթ էր կաթոլիկ միսիոնարներին հետ, կամ տեղեակ էր բժշկութեան, բացի Լոբման հէքիմի անունը յիշելուց եւ դուգուն — fontenelle բառը պատահաբար գործածելուց (№№ 4, 4 եւ 6,2) : Մթանցմիւնդելի տեղեկութիւնը ոչ մի բանով չի հաստատուում :

Վերջապէս, եւ այն պնդումը թէ Սայեաթ Նովան եղել է ատաղձագործ, չի հաստատուում այն ոտանաւորով (№ 32,2), որի վրայ յենում են սովորաբար :

Թէգուգ դայրսատան պահ տաս՝ ծեծով չի խրատվի խիվն,
իմչո՞ւ անձնէն չը՝ դուս էհայ, անախտելի, էն չար դիվըն,
Բէդասլըն՝ ասը չի՝ դառնա, քօլով չի սիպտակի սիվըն,
Ծուռըն փէտըն չի՝ դըրըստի ռանտան, դուրգար

Սայեաթ Նովա

Ակներեւ է, որ «դուրգար» այստեղ պարզ այլաբանական ձեւ է, բանաստեղծական մի արտայայտութիւն եւ ո՛չ երբեք Սայեաթ Նովայի արհեստը բնորոշող բառ :

Թէեւ Սայեաթ Նովայի արհեստը դժւար է որոշել, բայց նրա արհեստաւորների դասակարգին պատկանելը կասկածից դուրս է : Վերեւ բերած թուրքերէն երգում, ուր կան ինքնակենսագրական որոշ տւեալներ, Սայեաթ Նովան ասում է .

Օն իֆի իլում քամամ օլդի . քափշուր դիլար ուստա ֆեարա,
Օն ուչ իլում քամամ օլդի, օգրանդում քամամ սանաք,
Օն դարք իլում քամամ օլդի, ուստամս իեքու օլում խըլաք :

*) Տե՛ս Մեկիֆսէքեգի գիրքը, էջ 37—38 :

Այսինքն՝

Լրացաւ իմ 12 տարին, ինձ վարպետին ուսման տւին,

Լրացաւ իմ 13 տարին, ես լրիւ սովորեցի արհեստը,

Լրացաւ իմ 14 տարին, վարպետիս խալաթ նւիրեցի:

Խալաթ նշանակում է թէ հազուստ եւ թէ արհասարակ նւէր, որ աչկերտը տալիս էր իր վարպետին՝ վարպետի աստիճան ստանալիս:

Ի նկատի ունենալով բանաւոր տեղեկութիւնների անորոշութիւնն ու հակասական բնոյթը՝ Մելիքէթբէգը փորձում է մի քանի իրական տւեալների հիման վրա պարզել Սայեաթ Նովայի արհեստի խնդիրը: Նա ենթադրում է, թէ Սայեաթ Նովան զբաղւելիս է եղել կամ դերձակութեամբ եւ կամ մետաքսեղէնի առւետրով: Դերձակի վարկածը Մելիքէթբէգը հիմնաւորում է այն հանգամանքով, որ Սայեաթ Նովայի Աճառեանի նկարագրած ձեռագիրը պահած է եղել դերձակների շրջանում եւ գտնւել է Թաւրիդում մի դերձակի մօտ: Երկրորդ հիմքը այն է, որ Վրաց Գրագիրտական Ընկերութեան Գրադարանի № 1543 ձեռագրում կան մի շարք ոտանաւորներ՝ դրած Դերձակ Ստեփանի անունով, որոնց մի մասը անպայման պատկանում է Սայեաթ Նովային: Սրանից Մելիքէթբէգը եզրակացնում է, թէ Դերձակ Ստեփանն ու Սայեաթ Նովան միեւնոյն մարդն է:

Իսկ ինչ վերաբերում է Սայեաթ Նովայի մետաքսեղէնի վաճառականների դասին պատկանելուն՝ Մելիքէթբէգը ամենից առաջ վկայութեան է կանչում Սայեաթ Նովայի երկու վրացերէն երգերը (114,3 եւ 110,2), ուր բանաստեղծը երկու անգամ իրեն կոչում է վաճառական. ա) «ես վաճառական եմ հեռաւոր երկրից, իսկ դու Մարանդի շուկան. ես դրամ չունիմ դիպակ դնելու, ես հում նիւթի համար եմ եկել»: ք) «Ամբողջ աշխարհ մեղ մօտ (քէֆի) է, բաղադր ինչպէ՞ս այստեղ չլինի»:

Բացի այդ, իր երգերի մէջ Սայեաթ Նովան անվերջ յիշում է արեւելեան՝ հնդկի ու պարսկական մետաքսեղէններ, որոնց ծանօթ է հմուտ վաճառականի պէս: Նա յաճախ գործ է ածում փարչա, ֆիշմիք, գար, գարբաք, գարֆաշ, ատլաս, ֆիրմանշալ, դիրա, բադ-դադի, ֆաքիբա, ֆալամֆար, խաս, խամ եւ նման բաղմաթիւ ուրիշ բառեր:

Մելիքէթբէգի վերջին այս ենթադրութիւնը, որ շատ լաւ է հիմնաւորւած, արժանի է ուշադրութեան եւ ա՛յն պատճառով, որ որոշ չափով հաստատում է այն կարծիքը, թէ Սայեաթ Նովան 19 տարեկան հասակում ճամբորդել է Հնդկաստան ու Հաբէշ: Բացի

այդ, վրացերէն մի երգում, որի մասին ես կը խօսեմ քիչ յետոյ, Սայեաթ Նովան յայտնում է իր հովանաւորին, թէ ինքը գիտէ գնողները առջեւ բանալ մետաքսեղէն կտորներ: Սակայն եւ այնպէս, կասկածելի է, թէ Սայեաթ Նովայի իր մասին տաած վաճառական և բազազ բառերը բաւական են նրա արհեստը որոշելու համար. առաջին դէպքում՝ «վաճառական» բառը դործ է ածւած պարզապէս այլաբանական ձեւով, իսկ բազազ՝ վերաբերում է ոչ թէ իրեն՝ Սայեաթ Նովային, այլ քէֆի հրաւիրւած մէկ ուրիշին:

Իմ կողմից ես կարծում եմ, որ Սայեաթ Նովան ոչ թէ մէկ, այլ մի քանի արհեստ է ունեցել: Սայեաթ Նովայի մտքի, բնաւորութեան ու խառնւածքի տէր մարդը չէր կարող սահմանափակել միայն մէկ արհեստով: Դժւար, նոյն իսկ անկարելի է ենթադրել, որ Սայեաթ Նովան, ջուլհակ լինելու պարագային, երեսուն տարի անընդհատ դամւած կարողանար մնալ իր արհեստանոցում, կամ, դերձակ լինելու դէպքում ամբողջ ժամանակ զբաղէր ասեղ ու թելով, կամ, վերջապէս, եթէ վաճառական էր, ողջ կեանքը անցկացնէր խանութում: Եթէ հաւատանք Ն. Աղբալեանին, Սայեաթ Նովան մինչեւ 60 տարեկան հասակը սոսկ արհեստից ազատ ժամանակն է նւիրել աշուղութեան: Սայեաթ Նովայի պէս մարդիկ չեն կարող զարգանալ չափաւորութեան եւ միապաղաղութեան պայմաններում. նրանք միշտ շարժման մէջ են, մի կողմից միւս կողմն են ընկնում, մի ծայրայեղութիւնից միւսը, շրջում են երկրից երկիր, նոր մարդիկ են տեսնում, լսում են նոր երգեր: Բացի այդ, Սայեաթ Նովան աշուղութիւն էր սովորում, իսկ դրա համար պարտաւորւած էր տեղից տեղ անցնել, մի նշանաւոր աշուղից ուրիշ նշանաւոր աշուղի մօտ գնալ, հետեւաբար, եւ զբաղումի փոփոխութիւն կատարել: Իբրեւ արտասովոր ընդունակութիւնների տէր մէկը, նա հեշտութեամբ իւրացնում էր արհեստները, բայց ոչ մէկին չէր կապում: Նրա ընդունակութիւնների մասին մենք գիտենք վերեւ յիշւած թուրքերէն երգից, ըստ որի երկու տարում նա կատարեալ կերպով տիրացել է արհեստին (օգրանդում թամամ սանաթ):

Յետոյ, իր աշխարհահայեացքի ընդարձակման, արեւելեան գրականութեան աւելի մօտից ծանօթանալու, աշուղական արհեստի կանոններն ու գաղտնիքները աւելի լաւ հասկանալու համար նա ստիպւած էր դուրս գալ Թիֆլիսի սահմաններից, անցնել դէպի Արեւելք, դէպի Պարսկաստան ու Հնդկաստան: Իր ճամբորդութեանց ընթացքին նա չէր կարող կաշկանդւել իր սկզբնական զբաղումով եւ ստիպւած էր դիմել նաեւ ուրիշ արհեստների՝ համաձայն միջավայրի եւ վայրկեանի պահանջի: Այս ձեւով է նա անցկացրել երեսուն տա-

րի՝ Թափառելով երկրից երկիր եւ աշակերտելով երեւելի աշուղները — «սպտուց ինչ օրի եարսուն տարի գլուխ դրի ամէնուն խաղին» :

Այդ երեսուն տարւայ ընթացքին Սայեաթ Նովան մի բանով պէտք է ապրէր՝ հոգար իր համեստ կարիքները եւ վարձատրէր ուսուցիչներին, որովհետեւ դժւար է ենթադրել, որ նշանաւոր վարպետ աշուղները ձրի դաս տային : Բացի երաժշտութիւնից, Սայեաթ Նովան սովորել է, անշուշտ, պարսից ոտանաւորի օրէնքներն ու կանոնները, որ այնքան էլ հեշտ բան չէր այն ժամանակւայ պայմաններում : Դրա համար անհրաժեշտ էր ունենալ նիւթակաշ միջոցներ, իսկ դրամ աշխատելը կախած էր տեղից ու հանգամանքներից : Ահա թէ ինչու ես կարծում եմ, որ Սայեաթ Նովան չէր կարող սահմանափակել միայն մէկ արհեստով, այլ պէտք է յանձն առնէր ամէն աշխատանք, դիմէր տարբեր արհեստների, ըստ միջավայրի պայմանների : Նրա այդ զբաղումների մէջ, թուում է թէ, կարեւոր տեղ է բռնել վաճառականութիւնը, բազադի գործը :

Որ Սայեաթ Նովան իրօք շատ արհեստներ է իմացել, երեւում է Իրակլի Թադաւորին նւիրած վրացերէն մի ոտանաւորից, որ մեզ հասել է միայն մի մասով (մի քառեակ) եւ որ ասում է .

Իմ կրծքի տակ հաքիւր քառասուն արհեստ,
Հաւատա ինձ, ես քո առջեւ կը բացամ մետաքս ու դիպակ,
Քո հրամանով ես էլ սագ եմ բռնել,
Ժամում ես գանգ եմ տալիս, հաւատա ինձ :

Այս պատահական հատուածում Սայեաթ Նովան ցոյց է տալիս երեք արհեստ՝ կերպարի վաճառական, ժամկոչ, սաղանդար եւ միեւնոյն ժամանակ աւելացնում է, թէ ուրիշ շատ արհեստներ էլ գիտէ :

Սայեաթ Նովայի այս վկայութիւնը աւելի եւս համոզեցուցիչ է դարձնում իմ ենթադրութիւնը, թէ նա մէկից աւելի արհեստներ է իմացել :

XI

ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐԸ ՎՐԱՅ ԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ

Գիտութեան եւ արհեստների գործիչները ամէն տեղ եւ բոլոր ժամանակներում միշտ կարիք են ունեցել հովանաւոր-մեկենասների : Հովանաւոր եղել են թէ մասնաւոր անհատներ եւ թէ իշխանութեան ներկայացուցիչները :

Այդպէս է եղել եւ Արեւելքում, ի մասնաւորի Պարսկաստանում ու Հնդկաստանում, որոնք այս պահուս հետաքրքրում են մեզ Անդրկովկասի վրա ունեցած ազդեցութեան տեսակէտից: Ըստ երեւոյթին, չի պարել ոչ մի քիչ-չատ աչքի ընկնող բանաստեղծ, որ պալատական բանաստեղծի պաշտօն կրած չլինի: Շահից զատ, բանաստեղծներին հովանաւորել են խաները, կուսակալները եւ նոյն իսկ սոսկական հարուստ մարդիկ: Առանց հովանաւորի բանաստեղծ գոյութիւն չի ունեցել:

Դրութիւնը նոյնն էր եւ Անդրկովկասում, ուր գործում էր Սայեաթ Նովան: Այստեղ աշուղներին ու բանաստեղծներին հովանաւորում էին Երեւանի, Գանձակի, Շամախու խաները, ինչպէս եւ Վրաստանի թագաւորները: Երեւանի խանն, օրինակ, հովանաւորել է, Նաղաշ Յովնաթան աշուղին: Գանձակի խանը, որ մի ժամանակ շատ խոշոր դեր էր կատարում, հովանաւորել է պարսիկ նշանաւոր բանաստեղծ Նիզամին՝ Կովկասում այնքա՛ն սիրւած Լէյլի եւ Մէջնուն, Խաւարալ եւ Շիրին եւ այլ քերթւածների հեղինակին:

Այս մեկեանաների հովանաւորութիւնը մեծապէս նպաստել է բանաստեղծութեան զարգացման, բայց միաժամանակ եւ բացասական նշանակութիւն է ունեցել բանաստեղծութեան եւ բանաստեղծների համար. բանաստեղծները յաճախ ստիպւած էին իրենց ստեղծագործութիւնը յարմարեցնել հովանաւորի ճաշակին ու կամքին, ջանալ հաճելի դառնալ նրանց, մրցել միմեանց հետ, իրենց տեղը պահելու համար՝ կեղծել ու շողոքորթել:

Նման կախումը հովանաւորի քմահաճոյքից բանաստեղծի վիճակը դարձնում էր անկայուն. բաւական էր տիրոջ մէկ խօսքը, որպէսզի բանաստեղծն ընդմիջտ հեռանար թագաւորական կամ խանական պալատից: Ինչպէս յետոյ կը տեսնենք, մեր Սայեաթ Նովային էլ վիճակեց նման բախտ:

Վրաստանում ամենքը — ազնականութիւն, հասարակ ժողովուրդ թէ քաղաքային բնակիչներ — սիրում ու դնահատում էին երգն ու երաժշտութիւնը եւ լայնօրէն հովանաւորում արւեստագէտներին: Թագաւոր, ազնական կամ հարուստ մարդիկ իրենց մօտ պահում էին ամբողջ նւազախմբեր եւ առանձին աչքի ընկնող երգիչներին: Աւելի հասարակ մարդիկ՝ գոհանում էին մի սաղանդար — աշուղով: Իւրաքանչիւր մեկեանս հովանաւորում էր իր կարողութեան չափով*):

*) «Նաղաշ Յովնաթան Աշուղ», Փարիզ, 1910. Հրատ. Ա. Զոպանեանի: Այս հրատարակութիւնը զգալապէս լրացրեց Հայր Ակիմեանը, «Ազգագրական Մատենադարան» № 65:

Այդ երաժիշտների և աշուղների մեծ մասը հայեր էին, որոնք յօրինում ու երգում էին պարսկերէն ու թուրքերէն: Ինչպէս վերը ասեց, հայերէն ու վրացերէն երգը ընդունած չէր աշուղների կողմից:

Այս աշուղ-սաղանդարների մէջ պատահում էին տաղանդաւոր երգիչներ, որոնցից լաւագոյնները հրաւիրւում էին վրաց թագաւորի մօտ և պալատական սաղանդարի պաշտօն էին ստանում: Պարզ է, թէ քանի որ աշուղներն ըստ մեծի մասի հայեր էին, պալատական աշուղ-սաղանդարների մէջ էլ կային շատ հայեր: Պատմութիւնից սակայն, մեզ մնացել է միայն մի քանի անուն: Այսպէս, Ժամանակադրական կարգով մեզ յայտնի պալատական առաջին հայ աշուղն է Բէգթարէգ Աւթանդիլի որդի և Մարտիրոսի թոռը, որ եղել է Ժամանակակից վրաց Գէորգի ԺԱ. արքայի, որ մահմետական անունով կոչւում էր Շահ-Նաւազ Բ (1675—1688): Այս Բէգթարէգը օժտւած էր բնական տաղանդով և աշուղութիւն էր անում Գէորգի ԺԱ.-ի պալատում: Թէեւ նրա երգերը մեզ չեն հասել, բայց Ժամանակակից վրաց բանաստեղծները շատ բարձր էին դասում և մեծ դիմեստով են խօսում նրա մասին: Բացի այդ, նա փայլուն գրչագիր-արւեստագէտ էր: Նրա գրչին է պատկանում Շոթա Ռուստաւելու Ընծեմաւորի ամենէն աւելի գեղարւեստական ձեռագիրը: Ժամանակակիցները նրան կոչում էին Մեծն Բէգթարէգ: Նա հանդիսանում է հիմնադիրը իշխան Բէգթարէգովների տոհմի, որ մնացել է մինչեւ մեր օրերը:

Յաջորդ մեզ յայտնի աշուղն է Նաղաշ Յովնաթանը, որ պալատական աշուղ է եղել վրաց Վախտանգ Զ. թագաւորի (1711—14 և 1719—24) պալատում: Նաղաշ Յովնաթանը ծնւել է 1661թ. Ծօրոթ գիւղում, Ագուլիսից ոչ հեռու, և մեռել է նոյն գիւղում 1722ին: Բազմակողմանի շնորհքով օժտւած մի մարդ էր. հիանալի նկարիչ և փայլուն աշուղ: Սկզբում նա աշուղութիւն է արել Երեւանի խանի մօտ, ապա անցել է վրաց թագաւորի պալատը: «Ծանօթ էիր համայն մեծաց իշխանաց», ասում է նրա մասին իր որդին: Նա գրել է գեղեցիկ ոտանաւորներ և հայերէն լեզուով: Իր գրածները նա չի երգել, ինչպէս երեւում է նրա մի ոտանաւորի հետեւեալ հատւածից.*)

*) Brosset "Voyage Archéologique" en Géorgie et en Arménie V. Թիֆլիսի վէրա քաղում, այժմ արդէն գոյութիւն չունեցող հայկական Զրգիլենց եկեղեցու մօտ 1818ին տեսել է մի վրացերէն տապանաքար, ուր ասւած է հետեւեալը. « Ներսէսաշվիլին ապրուստ

Ասել ես՝ Տետրեր գրէ տաղով
Ծաղկէ՛ լաջվարդ ոսկէ վաքաղով
Գրել եմ կապել քաւքայ բաղով
Կուղարկեմ, գալում, գալում
Փափաքեմ, գալում, գալում: (էջ 48)

Տարակոյս չկայ թէ Ա. Երիցեանը շատ է ոգեւորւում ու երեւակայութեան մէջ ընկնում, երբ գրում է, թէ՝ «Վախտանգ Երեւի այնքան հմուտ էր հայերէնին, որ Թիֆլիս եկած պանդուխտ Շոռոթեցի Նաղաշ Յովնաթանին անդադար հրաւիրում է եղել իւր մօտ սորա հայերէն երգերը լսելու» («Արձագանք», 1892, № 63. Ըստ Հ. Ա. Կինեանի): Երիցեանը սխալւում է, որովհետեւ նախ՝ Նաղաշի ոտանաւորներն իրենց կառուցւածքով բնաւ չեն համապատասխանում աշուղների երգած մուսամբաղներին, թէ՛ ջիններին ու բայաթիներին: Երկրորդ՝ որովհետեւ Նաղաշից առաջ էլ, յետոյ էլ վրաց թագաւորների արքունիքում միշտ տիրող է եղել պարսկական երգն ու երաժշտութիւնը: Վերջապէս, երբ Թիֆլիս եկաւ, Նաղաշն արդէն ոչ թէ անյայտ բանաստեղծ էր, այլ Երեւանի խանի, թերեւս և ուրիշ խանների մօտ պարսկերէն ու թուրքերէն երգերով համբաւի տիրացած աշուղ:

Նաղաշը Երեւանից Թիֆլիս է տեղափոխւել անձնական պատճառներով, ինչպէս ինքն է ասում.

Կանանց դարտէն Յովնաթանըն
Գընաց դէպ Թիֆլիզու խանըն,
Կամի այնտեղ դնել վաքանըն
Թող ագառովի կանանց բերդէն:

(Հ. Ա. Կինեան, էջ 62)

Բայց բնութիւնն անում է իրը. Թիֆլիսում էլ Նաղաշը գրաււում է գեղունահներով եւ սկսում նոր «սիրոյ բան»: «Տաղ ի վերայ Գուրջըստանայ զօղալներին» գեղեցիկ տաղի մէջ նա զովարանում է Թիֆլիսի հրապոյրներն ու նրա գեղեցկուհիները.

տւեց ինձ, 27 տարեկան սագանդար Սմարաղդ Կիրակոսաշվիլու: Նա ինձ ամուսնացրեց, բայց ես ամուսնութիւնից երկու տարի անցած մեռայ, առանց բաւարար չափով ճաշակելու այս անցաւոր աշխարհի բարիքները»: Այս գրութեան տակ փորագրւած են եղել սագանդարի նազարանները՝ ագարպետի, քառ, դայիրա եւ երկու դուդուկ:

Գովեմ սրտիւ ուրախակամ
Թիֆլիզ քաղաքն պատուական.
Յոյժ գեղեցիկ եմ սիրական
Գուրջըստանու գօգալներն.

Այս տաղի մի ուրիշ փոփոխակում ասած է՝ «Շէն Թիֆլիզու խաթուններ», որ պարզ ցոյց է տալիս, թէ Նաղաշը սկսել էր գրաւել Թիֆլիսի հայուհիներով. Թիֆլիսի բնակչութեան երեք-քառորդը այն ժամանակ կազմում էին հայերը, իսկ միայն մէկ-երրորդը՝ վրացիներ, թուրքեր եւ այլն, մեծ մասամբ պաշտօնեաներ ու զին-ւորներ:

Նաղաշի սկսած «սիրոյ բանը» խիստ լուրջ յափշտակութիւն էր, որ գրաւում էր նրա ամբողջ ուշադրութիւնն ու ժամանակը. — ինձ հանեցիր իմ գործ ու բանէն, դանդաղուում է նա:

Գիր էի գրում քու անուանըն,
միտք էի անում սիրոյ բանըն.
Ետէն ուղարկեց վախճանգ խանըն:
Քիզ ո՞նց մոռանամ, գալում, գալում
Ես ո՞նց հեռանամ, գալում, գալում:

1720–21ին թողած պիտի լինի Նաղաշը Թիֆլիսն ու վախտանդ Զ.ի պալատը: Յամենայն դէպս, 1722թ. նա մեռել է իր հայրենի գիւղ Շօրոթում: Թիֆլիսից հեռանալու պատճառը այն ժամանակեայ վրաստանի ասորած ծանր օրերն էին, երբ վախտանդն այլեւս չէր կարող հետաքրքրւել երգով ու Նաղաշով: Եւ Նաղաշը վերադարձաւ ծննդավայր — «Ղարիբ Գիւրջիստան մնաց»:

Նաղաշից յետոյ, մինչեւ Սայեաթ Նովա, ոչ պատմութիւնը, ոչ էլ աւանդութիւնը որեւէ պալատական հայ աշուղի անուն չեն թողել մեզ: Իսկ Սայեաթ Նովայից յետոյ, երկու անուն էլ կայ՝ Աղաջան Ղուլամանիշվիլի եւ Եարալ Շանչիաշվիլի (Շանչեան): Աղաջինի մասին պատմում է Իրակլի Բ.ի թոռ, արքայազն Դաւիթը իր «Վրաստանի 1744—1844թ.թ. Պատմութեան» մէջ: Նկարագրելով Թիֆլիսի գրաւումը Աղա Մահմէտից 1795ին, նա ասում է, թէ պարսիկները Թիֆլիսում բռնել են թագաւորական սաղանդար Աղաջան Ղուլամանիշվիլուն, որից ուղեցել են իմանալ թագաւորի թագստոյը տանող ճանապարհը, բայց չեն յաջողել: Իսկ երկրորդը՝ Եարալ Շանչիաշվիլին՝ Իրակլի Բ.ի արքունիքում մեծ համբաւ ստացած

աշուղ էր. Իրակլիի մահից յետոյ մնաց Գէորգի ԺԳ.ի պալատում : Վրաց անկախութեան անկումից յետոյ Շանչիաշվիլին չլքեց իր հովանաւորներին եւ վրացի արքայազունների հետ միասին դնաց Մոսկւա ու Պետերբուրգ եւ մինչեւ մահ մնաց նրանց մօտ : Եւրալ Շանչիաշվիլիին է պատկանում իր ուսուցիչ Սայեաթ Նովային ձօնւած մի երգ, որ ցարդ, դժբախտաբար, հրատարակւած չէ,

Սայեաթ Նովայի աշակերտներից առանձնապէս աչքի ընկաւ աշուղ Շամչի-Մելքօն, որ պալատական աշուղ էր արքայազն Փարնասի մօտ : Շամչի Մելքօն թողել է թէ վրացերէն, թէ հայերէն երգեր : Վրացիները նրան համարում են վրացի բանաստեղծ :

XII

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՆ ՊԱԼԱՏԱԿԱՆ ԱՇՈՒՂ

Սայեաթ Նովան որպէս պալատական աշուղ — սաղանդար երեւացել է դեռ Կախեթիայի թաղաւոր Իրակլի Բ-ի արքունիքում 1750 թւից ոչ ուշ, որովհետեւ արդէն 1751ին նա, կուսույթ արքայազն Վախտանգի հետ, մի երգ է յօրինել, որի մէջ ծաղրում է նրա դատարկութիւնն ու ոչնչութիւնը՝ հպարտութեամբ հակադրելով սեփական խիղախութիւնն ու տաղանդը (Գրիշ. 97) : Գրի առնելով այս երգը՝ Սայեաթ Նովայի որդի Իվանը, աւելացնում էր թէ՝ «Սա, այսպէս ասած, թէջնիսի եղանակով յօրինւած հայհոյանք է : Սայեաթ Նովան թելաւում կուէլ է երջանկայիշատակ Վախտանգ արքայազնի հետ (Հերակլ Բ-ի որդին), իբրեւ մի անմիտ մարդ՝ այնտեղ եւ եթ 1751 թւին, ասել է արքայազնի դիմաց այս ոտանաւորը»*) :

Նման յանդգնութիւն, ի հարկէ, չէր կարող թոյլ տալ իրեն մի մարդ, որ նոր էր մտել պաշտօնի, և առիթ էլ հաղիւ թէ դտնէր, եթէ որոշ մօտիկութիւն ստեղծւած չլինէր երկսի միջեւ, իսկ դրա համար ժամանակ էր հարկաւոր : Այդ պատճառով պէտք է ենթադրել, որ Սայեաթ Նովան դէպքից առնւազն մէկ-երկու տարի առաջ արդէն աշուղ էր արքունիքում, որով ուրեմն պալատական աշուղութիւնն սկսած պէտք է լինի 1750 կամ նոյն իսկ 1749 թւին : Իր պաշտօնը պալատում Սայեաթ Նովան վերջացրեց ոչ ուշ քան 1765 թւիւր, երբ ինչ որ անհամաձայնութեան հետեւանքով՝ այս անգամ արդէն միացեալ Վրաստանի թաղաւոր Իրակլի Բ-ի հետ՝ հեռացեց

*) Թարգմ. Գ. Ասատուրի, «Ազգ. Հանդէս», № 10, էջ 110 :

արքունիքից եւ ընդունեց հոգեւորականութիւն: Իմ համոզումով Սայեաթ Նովան Իրակլի պալատը թողեց 1762ին:

Պալատական սաղանդարի կոչումը Սայեաթ Նովան կրում էր հպարտութեամբ եւ իր վրացերէն երգերում ուժգնօրէն շեշտում է այս պարագան: Դէպի իր հովանաւորը նա վերաբերւում է մեծ ակնածանքով եւ յաճախ գովում է նրա արժանիքները. Իրակլին քաջ զինւորական է ու հմուտ հրամանատար, արդար դատաւոր եւ բովանդակ Վրաստանից սլաշուած թագաւոր: Մի բան, որ այնքան էլ հեռու չէր իրականութիւնից, որովհետեւ պատմութիւնը այդպէս էլ ներկայացնում է Իրակլին, իբրեւ խոշոր արժանիքների տէր, ժողովրդի սէրը վայելող եւ վրաց ժողովրդի ազգային ձգտումների վերածնութեան մեծապէս զարկ տւող մի թագաւոր:

Սայեաթ Նովան ոչ միայն զւարճացնում էր իր հովանաւորին ուրախութեան ժամերին, այլեւ մխիթարում էր նրան, երբ վերջինս տխրութեան եւ վշտի մէջ էր ընկնում: Ախլերդեանը պատմում է, թէ Իրակլի տխրութեան ու թախծի վայրկեաններին նրան չրջապատողները մարդ էին ուղարկում եւ բերում Սայեաթ Նովային, որ սաղը ձեռքին մտնում էր թագաւորի մօտ՝ նազելով ու երգելով վերջինիս սիրած երգը՝ «Քուր, դու պղտորած Երասխի ջրով, չե՛մ դիմանալ քեզ պատճառանքներ ունեցողին (մահանաւորին)» (Ախլերդեան, էջ Թ.): «Պղտորած Երասխ» այստեղ նշանակում է Պարսկաստանի կողմից Վրաստանին սպառնացող մշտական վտանգը:

Այս ձեւով համարեա միշտ փարատւում էր թագաւորի տխրութիւնը՝ Սայեաթ Նովայի սաղի ու երգի հրաշագործ ազդեցութեան տակ Իրակլին մոռանում էր իր սիրտը մաշող վիշտը:

Ըստ երեւոյթին, Իրակլին էլ սիրով եւ առանձին ջերմութեամբ էր վերաբերւում իր աշուղին: Մթացմինդեւին հաղորդում է վրացիների մէջ մնացած հետեւեալ աւանդութիւնը. — Մի անգամ Սայեաթ Նովան, վրդովւած Վրաստանի ճորտերի ծանր վիճակից, յօրինում է մի երգ, որով անողոք դատապարտութեան է ենթարկում կալածատէրներին դաժան վերաբերումը դէպի իրենց ճորտերը: Այս երգը արագութեամբ տարածւում է ժողովրդի մէջ: Կալածատէրերը դանդաղ եւ անում թագաւորին եւ խնդրում արգելել, որ Սայեաթ Նովան այլեւս նման երգեր չյօրինէ, բայց Իրակլին, ի բնէ արդարարատէր մարդ, մերժում է կաշկանդել իր սիրելի երգչի ստեղծագործութեան ազատութիւնը:

Բացի վտխաբարձ յարգանքի ու սիրոյ զգացմունքից՝ Սայեաթ Նովայի եւ իր հովանաւորի միջեւ ստեղծւել էին եւ աւելի մտերիմ յարաբերութիւններ։ Իր թագաւորական դերքի շնորհիւ Իրակլին չէր կարող իր տանը, սլաւատական միջավայրում, սարքել անբռնադատիկ զւարճութիւններ ու քէֆեր, առանց հաշիւ առնելու տիտղոսն ու աստիճանը։ Այդ պատճառով կազմւել էր Իրակլիի մօտիկ մարդկանց մի խմբակ, որ հաւաքւում էր մասնաւոր տան մէջ եւ ուրախ ժամանակ անցկացնում։ Այդ խմբի անբաժան անդամն էր եւ Սայեաթ Նովան, որ «Իր զւարթութեամբ այնքան հուշակ էր ստացել քէֆերի մէջ» (Գրիշ. 107, 5)։ Երբ այս տեսակ հաւաքոյթներէց (մէջլիս) մի քանիսին Իրակլին բացակայ էր եղել, Սայեաթ Նովան յօրինել էր մի երգ (Գրիշ. 110), որի մէջ մանրամասնօրէն նկարագրում էր այդ խնճոյքները, գանգատւում, որ թագաւորը ներկայ չի լինում, սպառնում, որ քէֆերի մասնակիցները դատի կը դիմեն նրա դէմ եւ այլն։ Այս երգից երեւում է, որ նման խնճոյքներին մասնակցում էին զանազան տեսակ մարդիկ, ինչպէս եւ կանայք, որոնք, ըստ երեւոյթին, մուտք չունէին սլաւատական հաւաքոյթներին եւ որոնց ներկայութիւնը ախորժում էր Իրակլին։ Սայեաթ Նովան հրապուրում էր թագաւորին ինչ որ Նազելի Լէյլայով (Լէյլում Նազի), որ քեամանչա է նւագում, եւ խոստանում էր երգել նրա համար պատրաստած նոր երգերը։

Այսպէս համերաչիս ու սիրով ապրում էին Սայեաթ Նովան եւ նրա բարձր հովանաւոր՝ Վրաստանի թագաւոր Իրակլի Բ-ը, մինչև յարաբերութիւնների վերջնական խզումը։

(Շարունակելի)

Փարիզ

